

## ՀՀ Էկոնոմիկայի նախարարն այցելեց Եղեգնաձորի <Տարոն> տրիկոտաժի ֆաբրիկա

04.12.2012



Ղեկտնաբերի 2-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնադրման հինգ ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցելու նպատակով Վայոց ձորի մարզում հյուրընկալված ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի ուղեկցությամբ այցելեց Եղեգնաձորի <Տարոն> տրիկոտաժի ֆաբրիկա: Նախարարը տեղում ծանոթացավ ֆաբրիկայում տիրող իրավիճակին և արտադրական հնարավորություններին: Քննարկվեցին ֆաբրիկայի վերագործարկման և հնարավոր աշխատատեղերի ստեղծման խնդիրները: